ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ
ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ
HELSINKI CITIZENS' ASSEMBLY
VANADZOR OFFICE

2001 Հայաստանի Հանրապետություն,
Վանաձոր Տիգրան Մեծի պողոտա 59
59 Tigran Metsi st.
Vanadzor, 2001, Republic of Armenia
Tel. (հեռ.) (374 322) 4 22 68
Fax (ֆաքս) (374 322) 4 12 36
E-mail: hcav@hcav.am

Ե/2015- 23.01/54
23.01.2015 թ.

Վանաձոր համայնքի ղեկավար
Սամվել Դարբինյանին

Պատճենը՝ Վանաձոր համայնքի ավագանուն

Հարգելի պարոն Դարբինյան,

2015թ. հունվարի 22-ին կազմակերպություն են դիմել Վանաձոր քաղաքի «Քաղաքացիական նախաձեռնողների խմբի» ակտիվիստները, ովքեր հայտնել են, որ իրենք Վանաձոր քաղաքի բնակիչների շրջանում Վալերի Պերմյակովին Հայաստանի Հանրապետության իրավապահ մարմինների հսկողությանը հանձնելու, նրա կալանքը ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում կրելու և քննչական մարմինների կողմից նրա նկատմամբ քննչական գործողություններն անխափան իրականացնելու պահանջի մասին ստորագրահավաք են իրականացրել, որով ՀՀ գլխավոր դատախազից պահանջել են.

- ✓ պաշտոնական գրությամբ դիմել ՌԴ գլխավոր դատախազին Պերմյակովին ՀՀ իրավապահ մարմինների հսկողությանը հանձնել և պաշտոնական գրությունը հրապարակել,
- ✓ Ավետիսյանների ընտանիքի անդամների սպանության նախաքննությունը և դատաքննությունը իրականացնել առավելագույն հրապարակային և թափանցիկ:

Իրականացված ստորագրահավաքի նպատակներից մեկն էլ եղել է կոչ անել Վանաձոր համայնքի ղեկավարին և ավագանու անդամներին հրավիրել արտահերթ նիստ, հանդես գալ ուղերձով և ՀՀ գլխավոր դատախազից պահանջել 2015թ. հունվարի 12-ին Գյումրի քաղաքում Ավետիսյանների ընտանիքի սպանության մեջ մեղադրվող, ռուսական թիվ 102 ռազմաբազայի զինծառայող Վալերի Պերմյակովի գործի նախաքննությունն ու դատաքննությունը, այնուհետ նաև պատժի կրումը իրականացնել ՀՀ իրավապահ մարմինների և դատարանների կողմից:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակ իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը, միանալով «Քաղաքացիական նախաձեռնողների խումբ» ակտիվիստների պահանջին, դիմում է Ձեզ վերը նշված պահանջների շրջանակներում հրավիրել ավագանու արտահերթ նիստ և հանդես գալ ուղերձով:

Կից ներկայացվում է ստորագրահավաքի թերթիկների պատճենները:

Հարգանքով
կազմակերպության նախագահ՝ Արթուր Սաքունց

Կատարող՝ Ա. Չատինյան
achatinyan@hcav.am
հեռ.՝ 094042268

23.01.15